

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Ե Կ Ե Ղ Ե Յ Ա Կ Ա Ն Ք - Բ Ե Մ Ա Կ Ա Ն Ք

● Գլ. 21 Սեպտ. — Իմունց Ս. Աստուածամոր: Առաւօտուն, Գեր. Տ. Ռուբէն Սրբազանի գլխաւորութեամբ ամբողջ Միաբանութիւնը ինքնաշարժերով մեկնեցաւ Գեթսեմանի ձորը ու «Հրաշափառ»ի հանդիսութեամբ մուտք գործեց Ս. Աստուածածնայ Տաճար, ուր մատուցուեցաւ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը, Ս. Կոյսի գերեզմանին վրայ, ժամարարն էր Գեր. Տ. Ռուբէն Արքեպս. Մանասեան: Օրուան քարոզիչն էր Հոգ. Տ. Կիւրեղ Վրդ. Գարիկեան, բնաբան ունենալով Առակաց Գրքէն «Բազում զստերք ըստացան զմեծութիւն, բազումք արարին զօրութիւն, բայց դու առաւել եղբր և անցուցեր զամենքումք»: Հոգ. քարոզիչը հաստատեց կնոջ գերին քրիստոնէական ըմբռնումին առաւելութիւնը բազմատաճ հեթանոսականին: Քրիստոնէութեամբ, կինը նշանակութիւն ստացաւ իրրեւ անմեղաւորութիւն և անհատականութիւն:

Աստուածածին եղաւ կիներուն, Մայրերուն գերազանցը, Հասաւ գերազոյն սրբութեան աստիճանին և եղաւ «Տաճար Աստուծոյ Բանին», իրրեւ Մայր եղաւ խեղճականը ըլլալու չափ «Մայր սուրբ սքանչելի լուսոյն»: Աստուածածին իրրեւ Մայրերուն և կիներուն գերազանցը, պսակուեցաւ «Երկնային արքայուհի» տիտղոսով:

● Եր. 25 Սեպտ. — Կէսօրէ կտք, հարիւրաւոր արծաթեայ կանթեղներով ու փալիլուն ջաշերով զարդարուած Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ խաչվերացի նախատունը, մեծփայլուն հանդիսաւորութեամբ: Արարողութեանց հանդիսապետն էր Ամեն. Տեղապահ Ս. Հայրը, որ ապա Ս. Խաչափայտի մատունը Ս. Գլխաղբի մատուռէն հանդիսաւորապէս փոխադրեց Աստղ խորան, ուրկէ օրհնեց Տաճարը լեցնող բազմութիւնը:

Ժամերգութեան ընթացքին, Տեղապահ Ս. Հայրը Ուրարակութեան աստիճան շնորհեց Ս. Աթոռոյ ժառ. վարժարանի բարձրագոյն դասարանի չորս սաներուն, վարժական Աբէլեանի, Կարապետ Գապագեանի, Գէորգ Մարեանի և Սողոմոն Ելենեանի:

— Իրիկնաղէմին, Գեր. Տ. Նորայր Եպս. Պաղարեանի նախագահութեամբ, Մայր Տաճարին մէջ կատարուեցան հանդիսաւոր «Եկեցե՛ք եւ շահուա՛ք»:

● Կիր. 26 Սեպտ. — ԽԱՉՎԵՐԱՅ: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աստղ Սեղանին վրայ, ժամարարն էր Ամեն. Տեղապահ Ս. Հայրը, իրեն կը սպասարկէին Հոգ. Տ. Տ. Ջաւէն և Կիւրեղ Վարդապետները: Ամեն. Տեղապահը քարոզեց ներկայացնելով վերացման խաչի տուն իրրեւ մեծագոյնը խա-

չին նուիրուած չորս տներուն, ու մատնանշելով խաչին հանդէպ հասկացողութեան տարբերութիւնը հեթանոսութեան և քրիստոնէութեան միջեւ. ըսաւ թէ առաջինին մէջ ան կախաղան էր ոճրագործներու, երկրորդին մէջ ան զարձաւ փրկութեան գործիք մը և գերագոյն խորհրդանշիչն անոր: Յետ քարոզի, Գեր. Տ. Ռուբէն Ս. Արքեպս. Մանասեան նախագահեց Մեկգոնեան հարազատաց հոգեօցն ի հանդիսաւ կատարուած տարեկան հանդիսաւոր հոգեհանգստեան կարգին:

— Կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ խաչվերացի մեծահանգէս «Աղաստան»ը, նախագահութեամբ Ամեն. Տեղապահ Ս. Հոր, ներկայ էր հոծ բազմութիւն ժողովրդեան: Ապա պաշտուեցաւ երեկոյեան ժամերգութիւն:

● Բշ. 27 Սեպտ. — Յիսուսիկ մեղեկոյ: Սուրբ Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Ս. Գլխաղբի մատրան մէջ, ժամարարն էր Հոգ. Տ. Կիւրեղ Վրդ. Գարիկեան, Ապա, Գեր. Տ. Նորայր Եպս. Գլխաւորութեամբ կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտոն, նախ Մայր Տաճարին մէջ, ապա դաւիթը, Երանանոր Տ. Կիւրեղ Պատրիարքի շիրմին վրայ, ինչպէս նաև հին կրատան ու Չամ Թաղի առժամանայ գերեզմանատուններուն մէջ, թափօրական զնայքով, հետեւողութեամբ ժողովուրդի ստուար բազմութեան:

● Եր. 2 Հոկտ. — ՏՈՒ ԽԱՅԻ: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Ս. Նշան վերնամատրան մէջ, ժամարարն էր Հոգ. Տ. Վարուժան Վրդ. Գապարահեան:

● Կիր. 3 Հոկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ, ժամարարն էր Հոգ. Տ. Կիւրեղ Վրդ. Գարիկեան:

● Ուր. 8 Հոկտ. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան նախատեսակը պաշտուեցան ի Ս. Գէորգ (Ղպտոց). Երթ ու զարձի թափօրեւրուն և արարողութեանց հանդիսապետն էր Գեր. Տ. Ռուբէն Արքեպս. Մանասեան:

● Եր. 9 Հոկտ. — Ս. Գէորգայ զօրավաթին: Առաւօտուն, Գեր. Տ. Ռուբէն Արքեպս. Մանասեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը մեկնեցաւ Ղպտոց Ս. Գէորգայ վանքը, ուր մատուցուեցաւ Ս. Պատարագը, ժամարարն էր Հոգ. Տ. Շահան Արդ. Սիմեան: Քարոզեց Հոգ. Տ. Կիւրեղ Վրդ. Գարիկեան, բնաբան ունենալով «Ես, Տէր Աստուած քո, կոչեցից զքեզ...»: Նախ նկարագրեց օրուան Սուրբին կեանքն ու նահատակութիւնը, ապա ըսաւ թէ կեանքը, իր այլադան երեւոյթներով կոչ մըն է մեզի զէպի կատարելութիւն: Ոմանց հոգեկան ականջները սակայն զօց են այդ կոչին հանդէպ. Այդ կոչին ատակ հոգիները կը նմանին աշտանակներու վրայ դրուած ժամերու՝ որոնք կը հատնին լուսաւորելու համար իրենց շրջապատը: Այդկերպ եղած են բոլոր եկեղեցւոյ սուրբերն ու աստուածարեալ հայրապետները: Այդ կոչը ուղղուած չէ լոկ խումբ մը

մարդոց, այլ մեզ բողոքիս, վանդի քրիստոնէ-
ութիւնը կատարելութեան կրօնքն է և մեզմէ
խրաբանչիւրը պարտի ձգտիլ այդ բարձրագոյն
իրողութեան: Ս. Պատարագէն ետք, Միաբանու-
թիւնը պատուաւիրութեամբ Ղպոց չոգ. Տեսչէն:

— Կէսօրէ ետք, Ամեն. Տեղապահ Ս. Հօր
ղխաւորութեամբ կատարուեցաւ «Հրաշափառի»
հանդիսաւոր մօտաք Ս. Թարութեան Տանարէն
ներս: Կիրակմտից ժամերգութիւնն ու վարագայ
իւշի նախատունը պաշտուեցան մեր վերնամաս-
րան մէջ: Զկնի պաշտամանց, Տեղապահ Սրբա-
զանը իր շքախումբով վերադարձաւ Մայրա-
վանք, յորմենեակ Ս. Թարութեան Տանարէն ներս
կատարուեցաւ Տօրինական Սրբատեղեաց այցե-
լութեան երեկոյեան հանդիսաւոր թափօրը:

● Կիր. 10 Հոկտ. — Տօն վարագայ Ս. Խաչին:
Յետ առաւօտեան ժամերգութեան, որ պաշտուե-
ցաւ Ս. Թարութեան Տանարի մեր վերնամասրան
մէջ, Քրիստոսի Ս. Գերեզմանի վրայ մատու-
ցուեցաւ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը,
ժամարարն էր Գեր. Տ. Նորայր Եպս. Պոպարեան:
Գեր. Ս. Հայրը քարոզեց, բնարան ունենալով
«Սուրբ զխաչ քո շնորհեցեր, զէն եկեղեցւոյ
քում Սրբոյ»: Ըսաւ թէ՛ ո՛չ միայն մարդիկ, այլև
անասունները ունին իրենց յատուկ զէնքերը,
որոնցմով ինքզինքնին կը պաշտպանեն արտա-
քին իշխամիներու զէմ: Հաւատացեալին զէնքը
պէտք է ըլլայ միայն խաչը, անով ետ մղելու
համար Զարին լարած փորձութիւնները: Իսկ
ոչ միայն աստուային զէմ պաշտպանողական
գործիք մը իբրև պէտք է ծառայէ Քրիստոնէին,
այլև յարձակողական գործիք մը անոր զէմ:
Պէտք չէ սպասել փորձութեան զայն վանելու
համար լոկ: Ամէն տեսակի զէնքերն ու սուրբը
կը ծառայեն յիբաւորելու ու սպաննելու, իսկ
է լոկ որ կրնայ պարգեւել տեսական խաղաղու-
թիւն, ու աւելին, ու ոչ միայն այս աշխարհի
վրայ հեռու կը պահէ փորձութիւններէ ու կեր-
ջանկացնէ զմեզ, այլև մեր առջև կը բանայ եր-
կրնքի արքայութեան դռները: Ս. Պատարագէն
ետք, Ս. Գերեզմանին շուրջանակի դարձմամբ և
«Նշանաւ» ամենայն շարականի երգեցողայ
թեամբ, մեր Տեսչարանին մէջ փակուեցաւ այս
փառապանծ տօնակատարութիւնը, ժամը 11ին:

● Եր. 16 Հոկտ. — 72 աւակերացն Քրիստոսի:
Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տանարի
ներքին դաւիթը՝ Ս. Գեորգի սեղանին վրայ:
Ժամարարն էր Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքա-
համան:

● Կիր. 17 Հոկտ. — Ս. Պատարագը մատու-
ցուեցաւ Մայր Տանարին մէջ, ժամարարն էր
Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքահաման:

● Ուր. 22 Հոկտ. — Երեկոյեան ժամերգու-
թիւնն ու Թարգմանչաց նախատնակը մեծ հան-
դիսաւորութեամբ պաշտուեցան Մայր Տանարին
մէջ: Հանդիսապետն էր Գեր. Տ. Նորայր Եպս.
Պոպարեան:

● Եր. 23 Հոկտ. — Ս. Թարգմանչաց վարդապե-
տացն մերոց (Տօն ազգային եւ եկեղեցական): Առաւօտ-

եան ժամերգութեան ետք, Մայր Տանարի Աւագ
Սեղանին վրայ մատուցուեցաւ օրուան հանդի-
սաւոր Ս. Պատարագը, ժամարարն էր, ըստ սո-
վորութեան, Կիւլպէնկ. Մատենադարանի առժմ.
Տեսուչ Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքահաման,
որ խօսեցաւ քարոզ մը, նիւթ ունենալով Ամօթ
մարգարէի խորայնի ժողովուրդին ուղղուած այն
խօսքը թէ՛ սովեր պիտի գան, հացն ու ջուրը
պիտի պահանջեն, իսկ զոչ պիտի չմոռնիք:
Սակայն վայ այն ժողովուրդին որուն կը պակսի
Աստուծոյ խօսքին քարոզչիները: Այս իրողու-
թիւնը ջանաց պատշաճեցնել մեր ժողովուրդին,
որուն բարեբախտաբար չեն պակսած հոգեոր
անունը մատակարարողներ. որոնց կարկառուն
զէմքերը եղան այսօրուան տօնելի թարգմանչաց
հոյ՛լը, ու կարգաւ ծննդացաւ իւրաքանչիւրին
կեանքին ու գործերուն շուրջ, զրուակելով ա-
նոնց անստգիւտ արժանիքները, ու մաղթեց որ
Տէրը անպակաս ընէ մեր ժողովուրդէն իրենց
կեանքը Հայ եկեղեցիին ու Հայ Դպրոցին ի սպաս
զնոգ անհատներ: Ս. Պատարագէն ետք, Հոգ. Տ.
Պարգե Վրդ. Վրթանէսեանի նախագահութեամբ
կատարուեցաւ տարեկան հանդիսաւոր հոգեհան-
գըտեան կարգը, ի հանդիստ հոգւոց Սարգսի և
Տիրուհոյ Կիւլպէնկեանի, ծնողաց քարերարին
Ս. Աթոռոյ վանք. Գալուստ Պէյ Կիւլպէնկեանի:

● Կիր. 24 Հոկտ. — Ս. Պատարագը մատու-
ցուեցաւ Ս. Թարութեան Տանարի Բ. Գողգոթայի
վերնամասրան մէջ, ժամարարն էր Հոգ. Տ.
Պարգե Վրդ. Վրթանէսեան:

● Եր. 30 Հոկտ. — Ս. Անտարանչացն Մա-
րտի, Մարկի, Ղուկասու եւ Թովմանու: Ս. Պա-
տարագը մատուցուեցաւ Ս. Թովմանէս Աւետա-
րանչի մատրան մէջ, Ս. Թարութեան դաւիթը:
Ժամարարն էր Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Աւանան:

● Կիր. 31 Հոկտ. — Ս. Պատարագը մատու-
ցուեցաւ Մայր Տանարին մէջ, ժամարարն էր
Հոգ. Տ. Վարուժան Վրդ. Գապարեան:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

● Կիր. 19 Սեպտ. — Կէսօրէ ետք ժամը 4ին,
Augusta Victoria հիւանդանոցի հանդիսարանին
մէջ, Գերմաններու կողմէ «Թորգմանը Պաղես-
տինի հին պատմութեան մէջ» և «Մենակեացու-
թեան ծագումը» նիւթերուն շուրջ տրուած եր-
կու բանաստեղծութիւններուն ներկայ գտնուեցան
Հոգ. Տ. Պարգե Վրդ. Վրթանէսեան և Տիար Կ.
Հինդլեան:

● Բշ. 20 Սեպտ. — Կէսօրէ ետք, Հոգ. Տ.
Հայկազուն Վրդ. Արքահաման, որ զպրոցական
յառաջիկայ տարեշրջանին համար նոր ժառան-
գաւոր սաներ արձանագրելու պաշտօնով Պէյրութ
կը գտնուէր, ժամանեց Ս. Աթոռ:

● Գլ. 22 Սեպտ. — Առաւօտուն, Հին Քաղաքի նորոշման ընդհանուր քարտեզի Այսպէս, իր առաջին պաշտօնական այցելութիւնը տուաւ Ամեն. Տեղապահ Սրբազանին:

● Կիր. 26 Սեպտ. — Կէսօրէ ետք, Ս. Ռաֆայէլ Միաբաններէն Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Զին-չինեան արձակուրդով մեկնեցաւ Պոլիս:

● Բշ. 27 Սեպտ. — Առաւօտուն, Ամեն. Տեղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Պարգե Վրդ. Վրթանէսեանի և Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեանի, ցամաքի ճամբով մեկնեցաւ Սիւրիա-Լիբանան: Կ. Ամեն. և Տ. Հայրիկ Վրդ. վերադարձան Գլ. 5 Հոկտեմբերի կէսօրին:

— Կէսօրէ ետք, St. George's զորոցի որանին մէջ, տեղւոյն Բրիտանական Հիւպատոսարանի կողմէ տրուած «Conquest of Everest» ֆիլմի ներկայ գտնուեցան Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքանձան և Տիար Կարպիս Հինգլեան:

● Ուր. 1 Հոկտ. — Կէսօրէ ետք, American School of Oriental Researchի զորոցական տարեմաստի առթիւ տրուած թէյասեղանին ներկայ գտնուեցաւ Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքանձան, ընկերակցութեամբ Տիար Կ. Հինգլեանի:

● Բշ. 4 Հոկտ. — Երեկոյեան, Ֆրանչիսկեան եաններու վանքին մէջ «Աստուածամոր կեանքը» թատերական ներկայացման ներկայ գտնուեցաւ Բար. Տիր. Յովսէփ Սրկ. Մամուր:

● Գլ. 5 Հոկտ. — Առաւօտուն, Գեր. Տ. Նորայր Եպս. Պողարեան, ընկերակցութեամբ Տնօրէն Ժողովոյ Հոգ. անդամոց, պաշտօնական բացումը կատարեց ժառ. Վարժ. և Ընծայարանի և ապա Ս. Թարգմանչաց Վարժարանի զորոցական 1954-1955 խաղաղութիւնները:

● Կիր. 10 Հոկտ. — Կէսօրէ ետք, Ս. Ռաֆայէլ Միաբաններէն Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Պայրամեան արձակուրդով մեկնեցաւ Եգիպտոս:

● Ուր. 15 Հոկտ. — Ժամը 3ին կէսօրէ ետք, Հոգ. Տ. Կիրեղ Վրդ. Գարիկեան օդային զծով մեկնեցաւ Նիւ Եորք օդակայան Նուիրակ Ս. Աթոռոյ:

● Բշ. 18 Հոկտ. — Կէսօրէ ետք, Հոգ. Տ. Պարգե Վրդ. Վրթանէսեան, որ երեք շաբաթներէ ի վեր Լիբանան կը գտնուէր արձակուրդով, վերադարձաւ Ս. Աթոռ:

● Գլ. 19 Հոկտ. — Առաւօտուն, Ամեն. Տեղապահ Ս. Հայրը վանական գործերով մեկնեցաւ Իսրայէլ և վերադարձաւ Ուր. 22 Հոկտ. ի Կ. վ., ընկերակցութեամբ Հոգ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեանի:

● Գլ. 26 Հոկտ. — Առաւօտուն, Ամեն. Տեղապահ Սրբազանը վանական գործերով մեկնեցաւ Իսրայէլ և վերադարձաւ երկու ժամ ետք:

ՎԱՐՄԱՐԱՆՈՒՄ

Ս. ԱԹՈՌՈՑՍ ՎԱՐՄԱՐԱՆՆԵՐ

Ս. Աթոռոյ ժառանգաւորաց Վարժարանն ու Ընծայարանը աւելի քան երեք ամիսներու արձակուրդէ մը ետք վերաբացուեցաւ Բշ. 4 Հոկտեմբերի առաւօտուն: Աշակերտներու թիւն է 30, բաժնուած չորս դասարաններու, և 2 Սարկաւագներ, որոնք կազմեցին Ընծայարանի Ս. դասարանը: Աստուծոյ զատ, Սիւրիա-Լիբանանէն կը սպասուին նոր ժառանգաւորացուներու, զորս ընտրած ու արձանագրած է Վարժարանի բարեջան Տեսուչ Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. անցեալ ամիս իր հոն գտնուած շրջանին:

Իսկ Ս. Թ. Վարժարանը վերաբացուեցաւ տնօրէնական կանուխ, Բշ. 20 Սեպտեմբերին, աւելի քան 500 երկսեռ աշակերտներով:

Ուրախութիւն է մեզ այս առթիւ յայտարարել թէ Ս. Թ. Վարժարանը այս տարի ունեցաւ յաւելեալ Տղա դասարան մը (Երկրորդական Գ.), ուր իրենց ուսումը կը շարունակեն Վարժարանի ընթացաւարտներէն կարեւոր թիւով աշակերտաշակերտութիւններ:

Իսկ Ամմանի Հեթումեան ազգ. Վարժարանն ու Իսէյֆայի ծաղկոցը վերաբացուեցան Հոկտ. 1ի Ուրբաթ օրը, Հեթումեան Վարժարանը այս տարեշրջանին ունի մօտ 250 երկսեռ աշակերտութիւն, յանձնուած խնամքին Տեսուչ Հոգ. Տ. Կորիւն Վրդ. Մանուէլեանի և հոյլ մը փորձ ու կրթանուէր ուսուցիչ-ուսուցչուհիներու, որոնք կ'ընեն իրենց կարելին, ի շարք ընդհանուր գիտութեանց, վառ պահելու ազգային ոգին մեր մատաղ սերունդին մէջ:

Ուրախութիւն է նմանապէս հաստատել թէ Իսրայէլի երկու հայարնակ կեդրոններուն մէջ (Հայֆա և Եաֆա) այս տարի կրցած ենք բանալ մեր ազգային Վարժարանները, թէև համեմատելոցներով, բայց կանոնաւոր ու խնամքով զաւաճանդութիւններով, Եաֆայի Սուրբ Գլխաղբի Վարժարանը աշակերտութեան թիւին նուազութեան պատճառաւ Պաղեստինի դէպքերէն ապրին փակ կը մնար: Զոյգ Վարժարաններուն տեսչութիւնը յանձնուած է Իսրայէլի հայոց Հոգ. Հովիւ Տ. Բաբգէն Վրդ. Ապատեանին:

المدير والمحرر المسؤول - الآب هايكازون أبراهيميان
العدد ١٠

تصديدها - بطريقه الارمن الارثوذكس
أكتوبر ١٩٥٤
تطبع في مطبعة دير الارمن - القدس

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem, Armenian Patriarchate, Jerusalem.
Editor - Father Haigazoun Abrahamian, Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

